

Գրանցված է»
ՀՀ արդարադատության
նախարարության կողմից
15 դեկտեմբերի 2011 թ.
Պետական գրանցման թիվ 10011542

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

15 նոյեմբերի 2011 թ.
ք. Երևան

N 21-Ն

Հ Ր Ա Մ Ա Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԴԵՂԱԲԱՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 25-ի «Հայաստանի Հանրապետությունում դեղերի պետական գրանցման կարգը և դեղերի պետական գրանցման փորձաքննության վարձի չափերը հաստատելու մասին» N 347 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում դեղերի պետական գրանցման կարգ»-ի 12-րդ կետի պահանջներին համապատասխան՝

Հրամայում եմ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության դեղաբանական խորհրդի լիազորությունները՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության դեղաբանական խորհրդի աշխատանքները կազմակերպվում են Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունում՝ Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Կառավարության 3-րդ մասնաշենք, 2-րդ հարկում:

Հ. Քուշկյան

Հավելված
ՀՀ առողջապահության նախարարի
2011 թվականի նոյեմբերի 15-ի
N 21-Ն հրամանի

Լ Ի Ա Ջ Ո Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԴԵՂԱԲԱՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

1. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության դեղաբանական խորհրդի լիազորություններն են՝

1) Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարին՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կողմից իրականացված փորձաքննության արդյունքների հիման վրա դեղերի պետական գրանցման կամ այդ գրանցումը մերժելու, ինչպես նաև անվավեր ճանաչելու վերաբերյալ եզրակացության տրամադրումը,

2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան դեղագործական արտադրանքի վերաբերյալ անվտանգության, արդյունավետության, որակի, դրա կիրառելիության վերաբերյալ եզրակացության տրամադրումը,

3) դեղագործական արտադրանքի տեսակի (նոր դեղ, ջեներիկ դեղ, բուժիչ գեղարարական միջոց, կենսակտիվ սննդային հավելում և այլն) որոշումը,

4) դեղագործական արտադրանքի պետական գրանցման ներկայացված հայտերի փորձաքննության արդյունքների հիման վրա պետական գրանցման կամ գրանցումը մերժելու նպատակահարմարության մասին եզրակացության տրամադրումը,

5) դեղագործական արտադրանքի կլինիկական փորձարկումների հիմնավորվածության վերաբերյալ եզրակացության տրամադրումը,

6) փորձաքննության մեջ գտնվող դեղերի՝ դեղատոմսային, առանց դեղատոմսի տրվող, հիմնական և հսկվող դեղերի ցանկերին պատկանելության որոշումը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով,

7) պետական գրանցման ենթակա դեղերի կիրառման հրահանգների հաստատումը:

(Հավելվածը խմբ. 30.12.11 N 33-Ն)